

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴՈՒ ԻՆՁ  
ՍՊԱՍՈՒՄ  
ԷԻՐ



ԱՐՇԱԼՈՒՅՍ  
ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴՈՒ ԻՆՁ  
ՍՊԱՍՈՒՄ  
ԷԻՐ

A I  
13742

"ՀԱՅԱՍՏԱՆ"  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 1975



Ար 2

Մ 35

Մ  $\frac{704\ 03\ (957)}{701\ (01)\ 75}$  07, 75 «Տ»

Ժողովածուն ամփոփում է բանաստեղծուհու վերջին տարիներին գրած լավագույն բանաստեղծությունները:

Այն նվիրված է աշխարհում հարատև խաղաղությանը՝ մարդկության վեհ իդեալին:

© «Հայաստան» հրատարակչություն, 1975

## ԿՈՄԻՏԱՍԻՆ

Դու մի լուսաստղ էիր երկինքներում բացված,  
Լուսաբացի մարմանդ տրոփյունը լուսե,  
Դու մի ճրագ էիր, երկնատանը վերում  
Փարատելու երկրի մուսլությունը սև:  
Դու մի լուսաստղ էիր դողանջը երկնքի,  
Որ պիտի մեղմեիր հին ցավերը հաչոց,  
Լուսարան էիր ոգու արդար մի ճախրանքի,  
Որ մոմի պես երգդ բոցկլտար բոց սո բոց...  
Երբ շուրթերիդ էին երգ, երազ ու սրինգ,  
Սվաղ ճամփադ փոխվեց մահ ու ճախճիրներով,  
Երբ աղոթքի համար ձեռքդ տարար երկինք,  
Ձեռքերդ այրվեցին կոունկի արյունով:  
Դու մի որբուկ էիր, աճողուն ու տնավեր,  
Մեր տուն ու տաճարը հրդեհներում կորան,  
Եվ ի՞նչ իմանալիր, որ կարկուտ կտեղար,  
Մեր «փլեկ տան կոտրած գերանների վրա»:  
Երբ ծիրանի ծառի ամեն մի լուսաբաց  
Հաստատումն էր լույսի և երազի արդար,  
Ծերմակ մի աղոթք էր երկինքներն ի բաց,  
Բայց լուսաբացն անգամ սև մոխիր պիտի լար:  
Դու մի լուսաստղ էիր, երկինքներում բարձրիկ,  
Տխրությունը երկնի փարատելու համար,

Եվ շարականը քո գծում էր ուղեծիր  
Տիեզերքի անհուն խորհուրդների համար:  
Դու տխրությունն էիր մեր հանդ ու արոտի,  
Հին կարոտի երգը մեր երազի վրա,  
Դու մի մորմոք էիր, մոխիրը կարոտի,  
Որ թափվում էր հայոց տաճարների վրա:  
Քո սիրով արևն էր ելնում Վանա ծովից,  
Ոսկեվորիկ նավով, առագաստով կրակ,  
Առած վեհությունը հայոց մեր լեռների  
Իր լուրթ ու աստղածուփ երազների վրա:  
Դու, մի լուսաստղ էիր, դողանջը երկնքի,  
Որ աշխարհին բացիր տխրությունը հայոց: